Արձանագրություն N 4
ՍԱԾ ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15 նոյեմբերի 2018թ
ժամը 11:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Լուսինե Շարաֆյանը, Հասմիկ Ղուլյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
ա/ Հրավերով սահմանված ժամկետում «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:
բ/ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, եզրակացությունը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները գնահատող հանձանաժողովը որոշեց «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:
Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ս. Մաթևոսյան

անդամներ՝ _____ Լ. Շարաֆյան

_____ Հ. Ղույյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան